ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«28» 11 2016 թ.
ՊԿ/070-Ա2-775

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված՝ ՀՀ ՊՆ համակարգից ըստ հաստիքների ովքեր են պարգևատրվել, ինչքան գումարով, պարգևատրվողների քանակի և դրամական պարգևատրումների ընդհանուր գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցման առնչությամբ հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների համաձայն, տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե այն հանդիսանում է պետական և ծառայողական գաղտնիք: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարի 09.07.2015թ. N9-Ն հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 23-րդ, 46-րդ, և 47-րդ կետերի համաձայն, վերը նշված տեղեկատվությունները համարվում են պետական և ծառայողական գաղտնիք:

Նկատի ունենալով վերոգրյալը, հայտնում եմ, որ նշված տեղեկատվությունը կարող է տրամադրվել բացառապես «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

ՔՀԾ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-45-87